ԱՐԱՄԱՋԴ ՍՔԵՅԼ

Սոցիալական գործընկերությունը հանուն տեղական տնտեսության զարգացման

ԴԻՄԵ՛Ք SCALE

ԴՐԱՄԱԾՆՈՐՀՆԵՐԻՆ

- **Զարգացրե՛ք** ձեր սոցիալական ձեռնարկատիրության **կարողությունները**
- **Ընդլայնե՛ք** ձեր համայնքի **զարգացման** հնարավորությունները

Համայնքից՝ հնարավորություն

Secours Catholique Caritas France · Cáritas · Caritas Italiana organismo pastorale della CEI · Հայկական Կարիտաս Armenian Caritas

Հայկական Կարիտաս Բարեսիրական ՀԿ

2026

Հայկական Կարիտասի «ԱՐԱՄԱԶԴ. ՍՔԵՅԼ» ծրագիրը ֆինանսավորվում է Սեքյող Կաթոլիկ Կարիտաս Ֆրանսիայի, Կարիտաս Իսպանիայի և Կարիտաս Իտալիայի կողմից:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ, ԼՈՌՈՒ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ «ՀԱՄԱՅՆՔԻՑ՝ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ» ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԴԻՄԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սույն ուղեցույցը մշակվել է «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից՝ «ԱՐԱՄԱԶԴ. ՍՔԵՅԼ» (Սոցիալական գործընկերությունը հանուն տեղական տնտեսության զորացման) ծրագրի շրջանակներում և նպատակ ունի սահմանել սոցիալական տնտեսության զարգացմանն ուղղված երրորդ կողմերին ֆինանսական աջակցության (ենթադրամաշնորհների) տրամադրման կարգն ու ընթացակարգերը:

Հայաստանի սոցիալ-տնտեսական ներկայիս պայմաններում սոցիալական տնտեսության զարգացումը կարևոր գործիք է համայնքների տնտեսական կենսունակության բարձրացման, զբաղվածության ընդլայնման և սոցիալապես խոցելի խմբերի տնտեսական ներառման համար: Տարածքային անհամաչափ զարգացումը, գյուղական համայնքների տնտեսական սահմանափակ հնարավորությունները և սոցիալական ծառայությունների բեռնվածությունը պայմանավորում են այնպիսի մոդելների անհրաժեշտությունը, որոնք միաժամանակ ստեղծում են տնտեսական արժեք և սոցիալական ազդեցություն: Սոցիալական տնտեսությունը Հայաստանում ձեռք է բերում առանձնահատուկ ակտուալություն՝ պայմանավորված համայնքային զարգացման, սոցիալական համերաշխության և կայուն զբաղվածության հրատապ կարիքներով: Այն հնարավորություն է տալիս տեղական ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցով ձևավորել երկարաժամկետ տնտեսական լուծումներ՝ միաժամանակ արձագանքելով սոցիալական և բնապահպանական մարտահրավերներին:

Ուղեցույցը սահմանում է սոցիալական տնտեսության զարգացմանն աջակցող ենթադրամաշնորհային ծրագրի նպատակները, առաջնահերթ ուղղությունները, դիմելու պայմաններն ու ընթացակարգերը, ինչպես նաև դիմումների գնահատման և ընտրության չափանիշները՝ ապահովելով թափանցիկ, արդար և հաշվետու ֆինանսավորման գործընթաց:

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը «ԱՐԱՄԱԶԴ. ՍՔԵՅԼ» (Սոցիալական գործընկերությունը հանուն տեղական տնտեսության զորացման) ծրագրի շրջանակներում հայտարարում է ֆինանսական աջակցություն երրորդ կողմին ենթադրամաշնորհային մրցույթը:

Ենթադրամաշնորհները միտված են աջակցելու ՀՀ Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերի միավորված համայնքներում գործող կազմակերպություններին և նախաձեռնություններին՝

- Ստեղծել սոցիալական տնտեսության նոր միավորներ կամ հզորացմաները գործողներին,
- Խթանել համայնքային նախաձեռնությունները,
- Նպաստել սոցիալապես խոցելի խմբերի տնտեսական ներառմանը,
- Ապահովել համայնքային կայուն սոցիալ-տնտեսական զարգացում:

Սույն ուղեցույցը նախատեսված է բոլոր այն իրավաբանական և կազմակերպչական սուբյեկտների համար, որոնք, համապատասխանելով ծրագրի պահանջներին, ցանկանում են դիմել ֆինանսական աջակցության՝ սոցիալական տնտեսության զարգացմանն ուղղված գաղափարներով և ծրագրերով:

Ենթադրամաշնորհային մրցույթի նպատակը

Սույն ենթադրամաշնորհային ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերի միավորված համայնքներում սոցիալական տնտեսության կայացմանն ու կայուն զարգացմանը՝ համայնքների սոցիալ-տնտեսական ներուժի ամրապնդման, կայուն տնտեսական հնարավորությունների ստեղծման, զբաղվածության ընդլայնման և սոցիալապես խոցելի խմբերի տնտեսական ներառման խթանման միջոցով:

Ովքեր կարող են մասնակցել մրցույթին

Ենթադրամաշնորհային մրցույթին կարող են դիմել ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող կազմակերպություններն ու իրավաբանական սուբյեկտները, որոնք իրականացնում կամ նախատեսում են իրականացնել գործունեություն ՀՀ Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերի միավորված համայնքներում և որոնց գործունեությունը համահունչ է սոցիալական տնտեսության զարգացման սկզբունքներին:

Մասնավորապես, ենթադրամաշնորհներին կարող են դիմել՝

- քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, ներառյալ հասարակական կազմակերպություններ, ասոցիացիաներ և բարեգործական հիմնադրամներ,
- տեղական ինքնակառավարման մարմիններ և դրանց ենթակայությամբ գործող կառույցներ,
- սոցիալական ձեռնարկատերեր, սոցիալական տնտեսության միավորներ, թիմեր և կոոպերատիվներ,
- սոցիալական պատասխանատվություն ունեցող առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր (ՓՄՁ),

- մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) հաստատություններ և ոչ առևտրային այլ կազմակերպություններ:

Դիմումները կարող են ներկայացվել ինչպես անհատապես, այնպես էլ գործընկերային կամ միջոլորտային համագործակցության ձևաչափով՝ ձևավորելով կոնսորցիումներ: Գործընկերային դիմումների դեպքում հայտատուները պարտավոր են հստակ սահմանել յուրաքանչյուր կողմի դերերը, գործառույթները և պատասխանատվության շրջանակը:

Հայտատուները կարող են ներկայացնել մի քանի ծրագիր-առաջարկ, սակայն, հաղթող կարող է ճանաչվել միայն մեկը:

Սոցիալական տնտեսության զարգացման առաջնահերթություններ

Առաջարկվող ենթադրամաշնորհային ծրագրերը պետք է համապատասխանեն սոցիալական տնտեսության զարգացման այն առաջնահերթություններին, որոնք բխում են ՀՀ Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերի միավորված համայնքների սոցիալ-տնտեսական կարիքներից, տեղական զարգացման ծրագրերից, ՀՀ սոցիալ-տնտեսական դոկտրինից, ինչպես նաև ոլորտի հիմնական դերակատարների, շահառուների և շահակից կառույցների կողմից բարձրացված խնդիրներից:

Ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակում առաջնահերթություն կտրվի այն նախաձեռնություններին, որոնք նպաստում են սոցիալական արժեքի և տնտեսական գործունեության համադրմանը, համայնքային ներուժի օգտագործմանը և սոցիալապես խոցելի խմբերի տնտեսական ներառմանը:

Ուղղություն 1. Սոցիալական տնտեսության նոր միավորների ստեղծում կամ գործող միավորների հզորացում

Նպատակը

Աջակցել սոցիալական տնտեսության նոր միավորների ստեղծմանը և գործող միավորների զարգացմանը՝ խթանելով սոցիալական ազդեցություն ունեցող, տնտեսական առումով կենսունակ նախաձեռնությունները, որոնք նպաստում են համայնքային զարգացմանը, զբաղվածության աճին և սոցիալապես խոցելի խմբերի ներառմանը:

Նկարագրությունը

Ենթադրամաշնորհի շրջանակում աջակցություն կստանան սոցիալական տնտեսության միավորներ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, սոցիալական ձեռնարկություններ, կոոպերատիվներ և սոցիալական պատասխանատվություն ունեցող փոքր և միջին ձեռնարկություններ, որոնց նախաձեռնությունները համադրում են սոցիալական նպատակը և ձեռնարկատիրական մոտեցումը:

Նախաձեռնությունները ուղղված են լինելու սոցիալական տնտեսության նոր միավորների ստեղծմանը կամ գործող միավորների հզորացմանն և ընդլայնմանը՝ ներառելով արտադրանքի կամ ծառայությունների զարգացում, շուկայի հասանելիության բարելավում, կառավարման և բիզնես մոդելի կատարելագործում, ինչպես նաև ֆինանսական և կազմակերպական կայունության ամրապնդում: Աջակցվող նախաձեռնությունները պետք է հիմնված լինեն համայնքային կարիքների վրա, ունենան հստակ սոցիալական ազդեցություն և ուղղված լինեն երկարաժամկետ տնտեսական կենսունակության ապահովմանը:

Առաջնահերթ ուղղություններ

1. Սոցիալական տնտեսության նոր միավորների ստեղծում, այդ թվում՝ սոցիալական ձեռնարկություններ, կոոպերատիվներ և համայնքահեն տնտեսական նախաձեռնություններ, որոնք՝

- ստեղծում են սոցիալական ազդեցություն և տնտեսական արժեք,
- նպաստում են տեղական զբաղվածության աճին,
- ապահովում են սոցիալապես խոցելի խմբերի ներգրավումը աշխատանքի կամ տնտեսական գործունեության մեջ:

2. Գործող սոցիալական տնտեսության միավորների հզորացում և ընդլայնում, ներառյալ՝

- արտադրանքի կամ ծառայությունների բազմազանեցում,
- շուկայի հասանելիության և իրացման ուղիների բարելավում,
- կառավարման համակարգերի և բիզնես մոդելների կատարելագործում,
- ֆինանսական և կազմակերպական կայունության ամրապնդում:

3. Զբաղվածության և ինքնազբաղվածության խթանում սոցիալական տնտեսության միջոցով, մասնավորապես՝

- սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների և նրանց ընտանիքի անդամների համար,
- հմտությունների զարգացման, մասնագիտացման և վերամասնագիտացման բաղադրիչների ներառմամբ:

4. Շրջանաձև տնտեսության և կայուն բիզնես մոդելների զարգացում, ներառյալ՝

- ռեսուրսների արդյունավետ և պատասխանատու օգտագործում,
- վերամշակման և կրկնակի օգտագործման լուծումների ներդրում, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցում:

5. Սոցիալական նորարարություն, այդ թվում՝

- նոր ծառայությունների, ապրանքների կամ համագործակցության մոդելների փորձարկում,
- նորարարական լուծումների կիրառում սոցիալական կամ համայնքային խնդիրների հաղթահարման համար:

Ակնկալվող արդյունքները

- սոցիալական տնտեսության նոր միավորների ստեղծում կամ գործողների ընդլայնում ՀՀ Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերի միավորված համայնքներում,
- նոր աշխատատեղերի և ինքնազբաղվածության հնարավորությունների ստեղծում, հատկապես սոցիալապես խոցելի խմբերի համար,
- սոցիալական ազդեցություն ունեցող կայուն բիզնես մոդելների ձևավորում կամ զարգացում:

Համապատասխանության չափանիշներ

Ենթադրամաշնորհին կարող են դիմել՝

- ՀՀ-ում գրանցված քաղաքացիական հասարակության կազմակերպություններ կամ ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք իրականացնում են սոցիալական տնտեսության գործունեություն կամ ծրագրում են դրա մեկնարկը,
- սոցիալական ձեռնարկատերեր, սոցիալական տնտեսության միավորներ կամ նախաձեռնող թիմեր,
- կոոպերատիվներ,
- սոցիալական պատասխանատվություն ունեցող փոքր և միջին ձեռնարկություններ,

պայմանով, որ նախաձեռնությունը կիրականացվի ՀՀ Գեղարքունիքի, Լոռու կամ Շիրակի մարզերի միավորված համայնքներում:

Առաջնահերթություն կտրվի այն հայտերին, որոնք՝

- ապահովում են սոցիալապես խոցելի խմբերի ակտիվ ներգրավում,
- ներառում են շրջակա միջավայրի պահպանության կամ շրջանաձև տնտեսության տարրեր,
- ունեն ընդլայնման և երկարաժամկետ կայունության հստակ ներուժ:

Բյուջե եւ մրցութային ձեւաչափ

Սույն ուղղության շրջանակում ենթադրամաշնորհները կտրամադրվեն բաց մրցույթի միջոցով: Ենթադրամաշնորհի առավելագույն չափը կազմում է մինչև **4,200,000 ՀՀ դրամ**, ծրագրի իրականացման տևողությունը **10 ամիս**:

Ուղղություն 2. Համայնքային նախաձեռնություններ սոցիալական տնտեսության զարգացման համար

Նպատակը

Աջակցել համայնքահեն նախաձեռնություններին, որոնք նպաստում են սոցիալական տնտեսության գաղափարի տարածմանը, համայնքների սոցիալ-տնտեսական ակտիվացմանը և տեղական զարգացման գործընթացների ամրապնդմանը՝ խթանելով ներառական, կայուն և համայնքային կարիքներին արձագանքող լուծումներ:

Նկարագրությունը

Ուղղություն 2-ի շրջանակում աջակցություն կտրամադրվի համայնքահեն նախաձեռնություններին, որոնք հիմնված են համայնքի իրական կարիքների վրա և ուղղված են սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրների համակցված լուծմանը: Ակնկալվում է, որ նախաձեռնությունները կնպաստեն համայնքային տեղական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և սոցիալական տնտեսության սկզբունքների ինտեգրմանը տեղական զարգացման գործընթացներում:

Աջակցվող գործունեության առաջնահերթ ուղղություններ

1. Համայնքահեն տնտեսական նախաձեռնություններ, որոնք՝

- խթանում են համայնքների սոցիալ-տնտեսական ինքնուրույնությունը և տեղական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը,
- համադրում են սոցիալական ազդեցությունը տնտեսական գործունեության հետ:

2. Համայնքահեն բնապահպանական նախաձեռնություններ սոցիալական տնտեսության շրջանակում, որոնք՝

- ուղղված են համայնքային մակարդակում առկա բնապահպանական խնդիրների լուծմանը,
- համադրում են բնապահպանական նպատակը սոցիալական ազդեցության հետ՝ ստեղծելով զբաղվածության կամ եկամտի հնարավորություններ համայնքի անդամների, այդ թվում՝ սոցիալապես խոցելի խմբերի համար,

- նպաստում են շրջակա միջավայրի պահպանությանը, համայնքային պատասխանատվության բարձրացմանը և կայուն կենսակերպի ձևավորմանը:

3. Այլ համայնքային նախաձեռնություններ, որոնք՝

- հիմնավորված են համայնքային իրական կարիքներով,
- համահունչ են սոցիալական տնտեսության հիմնարար սկզբունքներին,
- նպաստում են սոցիալական ներառմանը, տնտեսական ակտիվությանը և համայնքային կայուն զարգացմանը:

Աշխարհագրական ծածկույթ

Ենթադրամաշնորհային ծրագրերը պետք է իրականացվեն ՀՀ Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերի միավորված համայնքներում: Նախապատվությունը կտրվի այն ծրագրերին, որոնք իրականացվելու են նշված մարզերի գյուղական բնակավայրերում: Պարտադիր չէ, որ ծրագիրն ընդգրկի տվյալ համայնքի բոլոր բնակավայրերը:

Համապատասխանության չափանիշներ

Սույն ուղղության շրջանակում ենթադրամաշնորհային հայտ կարող են ներկայացնել՝

- ՀՀ-ում գրանցված քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՀԿ-ներ, ասոցացիաներ, բարեգործական հիմնադրամներ),
- թիրախ մարզերի միավորված համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ)
- ՀՀ-ում գրանցված ոչ առևտրային կազմակերպություններ,
- սոցիալական ձեռնարկատերեր, սոցիալական տնտեսության միավորներ կամ նախաձեռնող թիմեր, կոոպերատիվներ,
- սոցիալական պատասխանատվություն ունեցող առևտրային կազմակերպություններ կամ անհատ ձեռնարկատերեր (ՓՄՁ):

Աշխարհագրական ծածկույթ

Ենթադրամաշնորհային ծրագրերը պետք է իրականացվեն ՀՀ Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերի միավորված համայնքներում: Նախապատվությունը կտրվի այն ծրագրերին, որոնք իրականացվելու են վերոնշյալ մարզերի գյուղական բնակավայրերում: Պարտադիր չէ, որ ծրագիրն ընդգրկի տվյալ համայնքի բոլոր բնակավայրերը:

Ընդունելի եւ անթույլատրելի ծախսերը

Ընդունելի ծախսեր

Ենթադրամաշնորհների շրջանակում ընդունելի են այն ծախսերն ու գործողությունները, որոնք անմիջականորեն կապված են ծրագրի նպատակների իրականացման հետ և անհրաժեշտ են առաջարկվող ծրագրի արդյունավետ իրականացման համար: Ընդունելի գործողությունները և ծախսերը ներառում են, մասնավորապես՝

- սոցիալական տնտեսության գործունեության իրականացման համար անհրաժեշտ կապիտալ ներդրումներ,
- սոցիալական տնտեսության համար սարքավորումների և նյութերի ձեռքբերում (կամ վարձակալություն),
- ձեռք բերված սարքավորումների տեխնիկական սպասարկում և շահագործման հետ կապված ծախսեր,
- սոցիալական տնտեսության զարգացմանն ուղղված ծառայությունների մատուցում և մասնագիտական խորհրդատվություն,
- մարքեթինգային, հաղորդակցման և գովազդային ծախսեր,
- ծրագրի իրականացման մեջ ներգրավված աշխատակիցների աշխատավարձ և պրակտիկայի ծախսեր (ոչ ավելի, քան դրամաշնորհի ընդհանուր բյուջեի 50%-ը),
- կարողությունների զարգացում, այդ թվում՝ տեխնիկական, կառավարման և կազմակերպական հմտությունների բարելավմանն ուղղված միջոցառումներ,
- տեխնիկական անձնակազմի կամ մասնագիտական փորձագետների ներգրավման հետ կապված ծախսեր, եթե դրանք անհրաժեշտ են հատուկ ծառայությունների կամ գործունեության մատուցման համար,
- անկախ փորձագետների, խորհրդատուների կամ մենթորների ներգրավում, հիմնավորված անհրաժեշտության դեպքում,
- փոքր ծավալի վերանորոգման կամ շինարարական աշխատանքներ,
- ծրագրի իրականացման գործառնական ծախսեր:

Բոլոր ներկայացված ծախսերը պետք է լինեն հիմնավորված, համաչափ և համապատասխանեն ծրագրի նպատակներին ու գործունեության տրամաբանությանը:
Ծախսերն ընդունելի են, եթե դրանք կատարվել են ծրագրի մեկնարկի օրվանից հետո: Այլ ծախսերը կարող են ընդունելի լինել դրամաշնորհի իրականացման ընթացքում միայն բացառիկ դեպքերում, եթե դրանք հստակ հիմնավորված լինեն՝ որպես ծրագրի առաջարկի հիմնական տարր և գրավոր կերպով համաձայնեցվեն «Հայկական Կարիտասի» հետ:

Անթույլատրելի ծախսեր

Մրցույթի շրջանակում անթույլատրելի են հետևյալ ծախսերն ու գործունեությունները.

- պարտքերի մարման և պարտքի սպասարկման վճարներ (ներառյալ՝ տոկոսները),
- կորուստների, պարտքերի կամ ապագա հնարավոր պարտավորությունների համար պահուստների ձևավորում,
- այն ծախսերը, որոնք արդեն ֆինանսավորվում են կամ ֆինանսավորվել են այլ դոնորների կողմից,
- արտարժույթի փոխարժեքի տատանումներից առաջացած կորուստներ,
- երրորդ անձանց տրամադրվող վարկեր,
- անձնական կամ ծրագրի նպատակներին չառնչվող ցանկացած ծախս,
- անհատական հովանավորություն,
- քաղաքական գործունեություն,
- շրջակա միջավայրի համար վնասակար նախաձեռնություններ կամ նախագծեր:

Հայտադիմումները պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին

Հայտադիմումները պետք է.

- ներկայացված լինեն ամբողջական փաթեթով՝ ներառելով բոլոր պահանջվող փաստաթղթերը,
- ներկայացված լինեն սահմանված ժամկետում,
- ուղեկցվեն իրականացման վայրի սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող օրինական փաստաթղթերով (կադաստրային տվյալներ) և լուսանկարներով,
- պարունակեն սեփական ներդրման վերաբերյալ համապատասխան հաստատող կամ երաշխիքային փաստաթղթեր
- ներկայացնեն միասնական սոցիալական ծառայությունների (ՄՍԾ) տարածքային կենտրոնների հետ համագործակցության հստակ ձևաչափ, որը կապահովի խոցելի խմբերի ներգրավվածությունը ծրագրում,
- հաստատեն, որ ծրագրում ներգրավված գործընկեր կազմակերպությունների պատասխանատու անձինք միմյանց հետ չունեն ընտանեկան կապեր,
- հստակ ներկայացնեն ծրագրի նպատակը և համառոտ նկարագրությունը՝ հիմնված համայնքի իրական կարիքների վրա և համապատասխան սոցիալական տնտեսության զարգացման սկզբունքներին,

- ցույց տան, որ հայտատուն ունի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական և մասնագիտական կարողություններ (աշխատակազմ, փորձ, ռեսուրսներ),

- սահմանեն դերերն ու պատասխանատվությունները ծրագրի իրականացման ընթացքում, հատկապես՝ գործընկերային կամ կոնսորցիումային հայտերի դեպքում,
- պարունակեն հայտատուի կողմից ինքնուրույն պատրաստված բովանդակություն և բացառեն ավտոմատ կամ արհեստական բանականության (ԱԲ) գործիքներով ամբողջությամբ գեներացված տեքստերի օգտագործումը:

Ֆինանսական պայմաններ

Ենթադրամաշնորհի բյուջեի առավելագույն չափը կազմում է՝

Ուղղություն 1.	4.200.000 ՀՀ դրամ
Ուղղություն 2.	2.000.000 ՀՀ դրամ

Բյուջեն պետք է լինի իրատեսական և համապատասխան շուկայական գներին:

Ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակում հայտատուները պարտավոր են ապահովել սեփական ներդրում, որը կարող է լինել ֆինանսական և/կամ ոչ ֆինանսական, կախված կազմակերպության իրավական կարգավիճակից:

Սեփական ներդրում

Սեփական ներդրումը պետք է լինի իրատեսական, հիմնավորված և փաստաթղթավորված: Սեփական ներդրումը կարող է ներառել՝

- ֆինանսական միջոցներ,
- նյութական ռեսուրսներ (տարածք, սարքավորումներ, գույք),
- մարդկային ռեսուրսներ (աշխատաժամեր, մասնագիտական ծառայություններ:

Ոչ ֆինանսական ներդրումը պետք է ունենա հստակ հաշվարկված և հիմնավորված դրամական համարժեք:

Հայտատու	Սեփական ներդրում
ՏԻՄ	15-20% ֆինանսական
ՔՀԿ (ՀԿ-ներ, ասոցացիաներ, հիմնադրամներ)	15-20% (ֆինանսական կամ ոչ ֆինանսական)

Հայտատու	Սեփական ներդրում
Սոցիալական ձեռնարկատերեր, ՍՏ միավորներ, թիմեր, կոոպերատիվներ, ՓՄՁ	20-25% ֆինանսական
Ոչ առևտրային կազմակերպություններ	15-20% (ֆինանսական կամ ոչ ֆինանսական)

Սեփական ներդրման բացակայությունը կամ անբավարար հիմնավորումը կարող է հանդիսանալ հայտի մերժման հիմք:

Առաքելությունից շեղում (Mission Drift)

Շահույթի վերաներդրում. բոլոր ֆինանսական և ոչ ֆինանսական շահույթի առնվազն 50%-ը պարտադիր է վերաներդնել ձեռնարկության կամ գործունեության սոցիալական կամ բնապահպանական նպատակների իրականացման համար: Այն հանդիսանում է անփոփոխ պարտադիր պահանջ բոլոր ԱՁ-ների և ՍՊԸ-ների համար, և վերջինիս չկատարումը համարվում է դրամաշնորհային ծրագրի պայմանների խախտում:

Ակտիվների սառեցում (Asset Lock) . Դրամաշնորհի միջոցներով ձեռք բերված բոլոր ակտիվները ենթակա են սառեցման, եթե կազմակերպությունը լուծարվում է ծրագրի ավարտից հետո: Ակտիվների սառեցման նպատակն է ապահովել, որ դրանք օգտագործվեն բացառապես հանրային նպատակների համար և կանխել դրամաշնորհային միջոցների մասնավորեցումը կամ շահագործումը անձնական շահերի համար: Դրամաշնորհի միջոցներով ձեռքբերված ակտիվները փոխանցվելու են ՍՏ մեկ այլ սուբյեկտի, որը համապատասխանում է ՍՏ չափանիշներին և կարող է շարունակել օգտագործել դրանք սոցիալական նպատակներով:

Սոցիալական տնտեսության մասնակցային կառավարում. Սոցիալական տնտեսության շրջանակներում մասնակցային կառավարումը հանդիսանում է հիմնարար սկզբունք, որը ենթադրում է ՍՏ միավորի կառավարման գործընթացներում տարբեր շահակից կողմերի՝ աշխատակիցների, շահառուների, անդամների և երբեմն նաև համայնքի ներկայացուցիչների ակտիվ ներգրավվածություն: Այս մոտեցումը նպատակ ունի հավասարակշռել տնտեսական և սոցիալական նպատակները՝ ապահովելով, որ որոշումների կայացումը արտացոլի սոցիալական առաքելությունն ու հանրային շահը: Մասնակցային կառավարումը խթանում է ներառականությունը, համատեղ պատասխանատվությունը, թափանցիկությունը և ժողովրդավարական մշակույթը՝ նպաստելով սոցիալական ազդեցության կայունությանը:

Հայկական Կարիտասի «ԱՐԱՄԱԶԴ: ՍՔԵՅԼ» ծրագիրը ֆինանսավորվում է Սեքյող Կաթոլիկ Կարիտաս Ֆրանսիայի, Կարիտաս Իսպանիայի և Կարիտաս Իտալիայի կողմից:

Ենթադրամաշնորհի տրամադրման գործընթացի փուլերը

Առաջին փուլ– Նախնական ընտրություն

1. Հայտարարություն
2. Տեղեկատվական առցանց հանդիպում *մարտի 12-ին, ժամը 14:30-16:00*

   https://us06web.zoom.us/j/87180770013?pwd=CXIUmjuSKV6hhcDAZQ0XcGnMaqpjJb.1

   Մուտքի գաղտնաբառ՝ 330697
3. Հայտադիմումների ներկայացման վերջնաժամկետ *ապրիլի 3, ժամը 23:59 (Երևանի ժամանակով)*
4. Արդյունքների ամփոփում. Ենթադրամաշնորհների նախնական ընտրություն

Երկրորդ փուլ- Ենթադրամաշնորհների վերջնական ընտրություն

5. Ենթադրամաշնորհների համաստեղծման հանդիպումներ
6. Խորհրդատվական հանդիպումներ
7. Հայտադիմումների ներկայացման վերջնաժամկետ
8. Հանձնաժողովի տեղամասային այցեր
9. Հայտադիմումների ներկայացում հանձնաժողովին (pitching)
10. Ենթադրամաշնորհների վերջնական ընտրություն
11. Պայմանագրերի կնքում և ենթադրամաշնորհային ծրագրերի մեկնարկ

Ընտրության կարգ եւ չափանիշներ

Առաջին փուլում ներկայացված ծրագրերը կգնահատվեն ըստ հետևյալ չափանիշների՝

#	Չափորոշիչ	Ուղղ. 1	Ուղղ. 2
1	Կարիքի հիմնավորում. Կարիքի փաստահենությունը և	10	10

	համապատասխանությունը մրցույթի առաջնահերթություններին		
2	Իրատեսականություն. Իրագործելի պլանի, համապատասխան ռեսուրսների առկայություն, փորձառու թիմ	10	10
3	Սոցիալական ազդեցություն. Սոցիալական արժեքի ստեղծում, սոցիալական ներառում, աշխատատեղերի ստեղծում	15	15
4	Տնտեսական կենսունակություն. Կենսունակ բիզնես մոդել, տնտեսական արժեքի ստեղծում	15	10
5	Իրատեսական բյուջե. Հիմնավորված ֆինանսական առաջարկ	10	10
6	Ծրագրի առաջարկի համապատասխանելիությունը. Ամբողջական փաթեթ, գործողությունների և մեթոդաբանության համապատասխանելիությունը պահանջներին	10	10
7	Նորարարություն. Նորարարական լուծումներ խնդիրների լուծման համար	10	10
8	Շրջակա միջավայրի պահպանություն և անվտանգություն. Ռեսուրսների արդյունավետ օգտագործում, բնապահպանական խնդիրների լուծում և վտանգի չեզոքացում	10	15
9	Մասնակցային կառավարում	10	10
	Ընդամենը	**100**	**100**

Պահանջվող փաստաթղթեր

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

- Հավելված 1. Հայտադիմում, լրացված ինչպես PDF, այնպես և MS Word տարբերակով
- Հավելված 2. Բյուջե
- Պրեզենտացիա (առավելագույնը 5–7 սլայդ)՝ ծրագրի գաղափարի ամփոփ ներկայացում:
  Հայտատուն ազատ է ներկայացման ձևի ընտրության հարցում. հնարավոր է օգտագործել տեքստ, լուսանկարներ, տեսանյութեր կամ այլ վիզուալ լուծումներ, որոնք կօգնեն առավել հստակ և պատկերավոր ներկայացնել ծրագրի գաղափարը:
- Հայտատու կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճենը:

Հայտադիմումի լեզուն հայերենն է:

Վերոնշյալ ենթադրամաշնորհի հայտը անհրաժեշտ է ներկայացնել առցանց՝ ուղարկելով հետևյալ էլեկտրոնային հասցեներին z.aghanyan@caritas.am և info@caritas.am թեմա վահանակում նշելով՝ SCALE-SEG կոդը Ուղղություն 1-ի և SCALE-CI կոդը Ուղղություն 2-ի համար:

Մրցույթի առաջին փուլին մասնակցության հայտերի (Հավելված 1) ներկայացման վերջնաժամկետն է՝ **ս/թ ապրիլի 3-ը, ժամը 23:59, (Երևանի ժամանակով)**: **Մրցույթի եզրափակիչ փուլին մասնակցելու են միայն առաջին փուլի հաղթողները:**

Հետադարձ կապ

Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի «Արամազդ. ՍՔԵՅԼ» ծրագրի ՖԱԵԿ ենթադրամաշնորհների պատասխանատու Լիանա Նիկոլյանի հետ +37493957201 հեռախոսահամարով կամ l.nikolyan@caritas.am էլեկտրոնային հասցեով: